ծաշրջանի ժողովուրդների միջև համագործակցությունը զորացնել և ամրագրել»,- ասաց Հայոց Հայրապետը: Վեհափառ Հայրապետը նաև անդրադարձավ արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման գործում Եկեղեցու առաքելությանը՝ նշելով, որ Եկեղեցին փորձում է կարելին ի գործ դնել՝ կրոնական և հոգևոր առաջնորդների հետ նպաստելու խաղաղության և համագործակցության այդ փոխհարաբերություններին:

Շնորհակալություն հայտնելով հանդիպման համար՝ պրն Փիթեր Սեմնեբին վերհիշեց իր առաջին այցը Հայաստան 1987 թվականին, ապա սոսկալի երկրաշարժի օրերին: Իր խոսքում նա անդրադարձավ նաև իր ստանձնած պարտականություններին՝ նշելով, որ կոչված է նպաստելու հակամարտության խաղաղ կարգավորմանը:

Հանդիպման ընթացքին խոսվեց տարածաշրջանի այլ խնդիրների մասին, անդրադարձ կատարվեց նաև Հայաստանյայց Առաքելական և Վրաց Ուղղափառ Եկեղեցիների միջև առկա փոխհարաբերություններին, Վիրահայոց թեմի խնդիրներին:

Հանդիպմանը ներկա էր Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ՈՒՄ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Ապրիլի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Հունգարիայի արտակարգ և լիազոր նորանշանակ դեսպան Արպադ Սեկեյին (նստավայրը՝ Մոսկվա):

Շնորհավորելով դեսպանին նշանակման առիթով՝ Վեհափառ Հայրապետը փոխանցեց նրան իր գնահատանքն ու բարեմաղթանքները: *«Մեզ համար ուրախալի է տեսնել, որ նոր մակարդակի վրա զարգացում են ապրում երկու երկրների փոխհարաբերությունները՝ համարժեք այն կապերին, որ պատմականորեն ձևավորված են եղել երկու ժողովուրդների միջև»*,- ասաց Նորին Սրբությունը: Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաև Հունգարիայի իշխանությունների հոգատարությունն ու բարյացակամ վերաբերմունքը վայելող հայ համայնքի կյանքին:

Իր հերթին դեսպանը, շնորհակալություն հայտնելով հանդիպման հնարավորության համար, անդրադարձավ 28 տարիներ առաջ Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին իր կատարած առաջին այցին: Դեսպանը Նորին Սրբությանը ներկայացրեց նաև Հունգարիայի քաղաքական և կրոնական իրավիճակը:

Հանդիպմանը խոսվեց նաև հայ ժողովրդի կյանքում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կարևոր դերի և առաքելության մասին, անդրադարձ կատարվեց Եկեղեցու գործունեությանը և միջեկեղեցական հարաբերություններին: